ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 53

31 օգոստոսի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի □ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ□ ԹԻՎ 57 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 8 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Մարալիկ քաղաքի բյուջեի սուղ հնարավորությունները,քաղաքի պահպանման ու ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը, և ղեկավարվելով □Իրավական ակտերի մասին□ Հայաստանի Հանրապետության 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի □ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին□ N 57 որոշման թիվ 8 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման N 8 հավելվածի 4-րդ տողի դաշնամուրի դասատու բառերը փոխարինել ջութակի դասատու բառերով:
2. Որոշման N 8 հավելվածի 5-րդ տողի (դաշնամուրի դասատու, հաստիքի քանակ-1,հաստիքի միավոր-1, 32500 դրամ) գործողությունը դադարեցնել:
3. Որոշման N 8 հավելվածի 6-րդ տողի (դաշնամուրի դասատու, հաստիքի քանակ -1,հաստիքի միավոր-1, 32500 դրամ) գործողությունը դադարեցնել:
4. Առաջարկել Մարալիկ համայնքի ղեկավարին հանձնարարել երաժշտական դպրոցի տնօրեն Լուսինե Կարապետյանին կատարելու համապատասխան որոշման պահանջները 2012 թվականի սեպտեմբերի 1-ից, հետևել աշխատանքային կարգապահությանը, իսկ ուսումնական պլանի կազմման և վերահսկողության պարտականությունները կարգադրությունով դնել երաժշտական դպրոցի ուսմասվար Սվետլանա Հովհաննիսյանի վրա:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

31 օգոստոսի 2012 թվական
ք. Մարալիկ